ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

ի պատասխան Ձեր 06.12.2023թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետի 30.12.2022թ. հ.4678-Ա որոշումով «Ջերմուկ Գրուպ» ՓԲ ընկերությանը տրամադրվել է 1063,23քմ մակերեսով հողամաս, հիմք ընդունելով նաև վարչական դատարանի թիվ ՎԴ/9345/05/20 վճիռը:

Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց պողոտայի հ.18/4 հասցեում բնակելի շենքի փոսորակի փորման շինարարական աշխատանքների իրականացման կապակցությամբ «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Վ. Պողոսյանի նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն 30.06.2023թ. կազմվել է հ.003293 արձանագրությունը, այնուհետև իրավախախտման շարունակական բնույթ կրելու հիմքով՝ նույն օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 07.08.2023թ. հ.003559 արձանագրությունը: Արդյունքում հ.003293 արձանագրության հիման վրա «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի նկատմամբ 25.07.2023թ. ընդունվել է 1.000.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ նշանակելու մասին հ.Վ-29/133 որոշումը, իսկ հ.003293 արձանագրության հիման վրա 29.08.2023թ. ընդունվել է 1.000.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ նշանակելու մասին հ.Վ-34/69 որոշումը:

Միաժամանակ՝ Արշակունյաց պողոտայի հ.հ.18/1, 18/2, 18/4, 18/13, 18/4 հասցեներում Երևանի քաղաքապետի հետ 08.09.2022թ. համաձայնեցված հ.01/18-05/2-Դ-59327-917 նախագծի պահանջներից դուրս «Ա» և «Դ» մասնաշենքերում իրականացվել են լրացուցիչ կցակառույց շինության կառուցման շինարարական աշխատանքներ, խուլ պատերում իրականացվել են պատուհանների բացվածքներ և չեն պահպանվել միջհարկային ծածկերի ֆիզիկական չափերը: Նշվածի կապակցությամբ «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Վ. Պողոսյանի նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն 17.02.2023թ. կազմվել են համապատասխանաբար՝ հ.001908 և հ.000048 արձանագրությունները, որոց արդյունքում «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենը ևս տուգանվել է (28.03.2023թ. ընդունվել է 1.000.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ նշանակելու մասին հ.Վ-12/2 որոշումը, հ.001908 արձանագրության հիման վրա ընդունվել է 1.000.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ նշանակելու մասին հ.Վ-42/22 որոշումը):

Շինարարական հրապարակի ոչ պատշաճ կազմակերպման վերաբերյալ, մասնավորապես՝ փոշեկլանիչ ցանցը թերի իրականացնելու առնչությամբ 18.10.2023 թվականին վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 157.15 հոդվածի 3-րդ մասի համաձայն կազմվել է հ.004125 արձանագրությունը:

Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց պողոտայի հ.հ.18, 18/4, 18/5, 18/10, 18/12 և 18/6 հասցեներում բազմաֆունկցիոնալ համալիրի՝ «Ա», «Ա/1, «Բ», «Բ/1», «Գ», «Գ/1», «Դ», «Դ/1» և «Դ/2» մասնաշենքերի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում չեն պահպանվել Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված հավելվածի լրացուցիչ պահանջները, մասնավորապես՝ ավտոլվացման կետի շահագործված չլինելը, որի համար կառուցապատող «Ջերմուկ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Վլադիմիր Վրեժի Պողոսյանի նկատմամբ աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից 2022 թվականի սեպտեմբերի 8-ին վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 157.15 հոդվածի 3-րդ մասի համաձայն կազմվել է հ.042903 արձանագրությունը:

Տեղեկացvում է նաև, որ Արշակունյաց պողոտայի հ.18/6 հասցեում կամ հասցեին կից, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացվել են շինության հիմքի կառուցման, մասնավորապես՝ հիմքի փորման շինարարական աշխատանքներ, որի համար կառուցապատողի նկատմամբ քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից 2022 թվականի նոյեմբերի 1-ին և դեկտեմբերի 30-ին Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն կազմվել են հ.000919 և հ.001314 արձանագրությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ